



# ՀԱՅ ԲԺՇԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐԸ

**Դավիթ Աբրահամյան**, բ.գ.թ., դոցենտ Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդեսի գլխավոր համախմբագիր, Հայ բժշկագիրների ասոցիացիայի հիմնադիր նախագահ

**Սամսոն Խաչատրյան**, բ.գ.թ. Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդեսի գլխավոր համախմբագիր, Քնի խանգարումների հայկական ասոցիացիայի հիմնադիր նախագահ

Բավականությամբ կարդացինք պրոֆեսոր Գայանե Հովհաննիսյանի և համահեղինակների «Առողջապահական ոլորտի թարգմանության և թարգմանիչների պատրաստման առանձնահատկությունները» հոդվածը [1]: Մեր երախտագիտությունն ենք հայտնում հեղինակներին այս արդի հարցով այսպիսի լուրջ վերլուծական աշխատանք կատարելու և հնարավոր լուծումներ առաջարկելու համար: Լինելով բժշկագիտական հանդեսի խմբագիրներ և անընդհատ առերեսվելով ոչ միայն զուտ բժշկական, այլև լեզվաբանական, թարգմանական մարտահրավերների՝ չէինք կարող չարձագանքել այս հոդվածում բարձրացված հրատապ հարցերին:

Հայերեն որակյալ մասնագիտական նյութերի սղության պատճառով մենք՝ հայ բժիշկներս, հաճախ ենք ակամայից վբաղվում բժշկական թարգմանությամբ՝ ինչպես հիմնականում ռուսերենից կամ անգլերենից հայերեն, այնպես էլ հակառակ ուղղությամբ: Դա օգնում է մեզ չմոլորվել օրավոր պարզացող բժշկության և տեխնոլոգիաների հորձանուտում, տեղեկանալ մեր ոլորտի վերջին նվաճումներին, ստանալ ախտորոշիչ-բուժական տարբեր իրավիճակային հարցերի պատասխաններ և այլն: Իրեն հարգող և ինքնակրթությամբ վբաղվող բժիշկը գրեթե ամեն օր օգտվում է Փաբմեդ [2] կամ Ափթուդեյթ [3] կամ գոնե Գուգլ սքոլար [4]

առցանց անգլիալեզու շտեմարաններից: Բացի դրանից, հանրության համար հայերենով որակյալ ուսուցողական, հանրամատչելի բժշկական նյութեր պատրաստելու համար որոշ կամավոր բժիշկներ թարգմանում կամ ստեղծում են հայալեզու հոդվածներ Վիքիպեդիա առցանց հանրագիտարանում: Այդ իմաստով հիշատակման է արժանի «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության և Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի համատեղ «Ես ստեղծում եմ բժշկական կարևորագույն հոդված» նախագիծը, որի շրջանակներում անգլերենից հայերեն են թարգմանվում 1000 կարևորագույն և ամենապահանջված բժշկական հոդվածները [5]:

Մյուս կողմից, բժշկական հայերենի պահպանման ու վարձագման յուրօրինակ դարբնոց է դարձել մեր գիտական հանդեսը՝ ԱԲՀՀ-ն, որի գրեթե ամեն համարում կարելի է հանդիպել անգլերեն նոր տերմինների նորաստեղծ, հարմարեցված հայերեն թարգմանությունների: Բնականաբար դրանց մի մասը, ինչպես հիրավի նշում են պրոֆ. Գ.Հովհաննիսյանը և համահեղ., այդպես էլ կիրառության մեջ չեն մտնում, բայց որոշները շատ արագ ընդունվում ու տարածվում են բժշկական հանրության և հասարակության լայն շերտերում: Ի դեպ, հետաքրքրական է նշել, որ մեր բազմաթիվ «ն-

րաստեղծ» տերմիններ այդքան էլ նորաստեղծ չեն, այլ կարելի է «պեղելով գտնել» մեր վայելչափայլ գրերից՝ գրաբարից: Այդպիսի տերմինի մի օրինակ է «ռանդոմ» բառի «վայրապար» թարգմանությունը, որն առնվազն 7 անգամ հանդիպում է Աստվածաշնչում [6]: Սակայն վայրապարը կարծես այդքան էլ բարյացակամորեն չընդունվեց բժշկական համայնքի կողմից և երևի կմնա գրաբարի լուսանցքներում: Փոխարենը, կարծես, հաղթող է դուրս գալիս երկայնաշունչ «պատահական բաշխմամբ» արտահայտությունը...

Վերոնշյալ հեղինակային խմբի հետ համամիտ ենք նաև բժշկական գիտաժողովների համընթաց թարգմանության խնդիրների առումով: Խորապես համոզված ենք, որ նմանատիպ գիտաժողովներից օրեր առաջ թարգմանչին (լինի բժիշկ, թե ոչ) պետք է տրամադրվեն բոլոր ելույթների բնագրերը կամ գոնե պրեպենտացիաները, որպեսզի ինքը պատրաստվի և բոլոր ծագած հարցերին նախապես պատասխաններ ստանա նեղ մասնագետներից: Այլապես հավազյուտ չեն դեպքերը, երբ գիտաժողովի ժամանակ համընթաց թարգմանիչը, չհասկանալով բուն նյութը կամ հետ մնալով ելույթ ունեցողի տեմպից, կամ պարզապես հայտնվում է ստուպորի մեջ, կամ սկսում է վբաղվել «ինքնագործունեությամբ»՝ բոլորիս հայտնի հետևանքներով: Հատկապես կարևոր է նախապատրաստությունը բժշկական կրթություն չունեցող թարգմանիչների համար, հաշվի առնելով, որ բժշկի ուսումնառության ընթացքում տերմինների հիմնական մասը սովորական ուսումնական գործընթացի ընթացքում պահեստավորվում է, ի տարբերություն այլ կրթություն ունեցողների: Ընդ որում տերմինների յուրացումը պետք է իրականացվի շարունակական կերպով, նույնիսկ առանց կոնկրետ թարգմանչական նախագծերի:

Առանձին ցավոտ թեմա է, որին նույնպես անուղղակիորեն անդրադարձել էին հեղինակները, էպիկրիվների և բժշկական տարատեսակ տեղեկանքների, ամստորոշիչ միջամտությունների արձանագրությունների նոտարի կողմից վավերացված թարգմանությունը, երբ մարդիկ իրենց բժշկական թարգմանությունների գործը վստահում են նոտարական տարատեսակ գրասենյակների և երբեմն ստանում են այնպիսի թարգմանություններ, որոնք այդպես էլ չեն ծառայում իրենց նպատակին, քանի որ պարունակում են բազմաթիվ իմաստային ու մասնագիտական սխալներ:

Ըստ այդմ պրոֆ. Հովհաննիսյանը և համահեղ. կարևոր հարց են բարձրացնում, «թե ով պետք է բժշկական թարգմանություններ կատարի՝ բժիշկները, թե տվյալ ոլորտի մասնագետ չհանդիսացող թարգմանիչները»: Եվ մենք միանգամայն համամիտ ենք նրանց հետ, որ լավագույն տարբերակը կլինեն բժիշկ-թարգմանիչը, ով գրեթե հավասարապես տիրապետում է բժշկությանը և մայրենի ու օտար լեզուներին: Ի թիվս այլ նպատակների ու խնդիրների, հենց այս հիբրիդային մասնագիտության պարզացման և բժշկական հաղորդակցության կատարելագործման նպատակով 2022 թվականին հիմնադրվեց Հայ բժշկագիրների ասոցիացիան (ՀԲԳԱ, անգլերեն՝ Armenian Medical Writers Association, ArMWA)՝ ոգեշնչվելով արդեն ավելի քան 80 տարի գոյություն ունեցող Ամերիկյան բժշկագիրների ասոցիացիայով (American Medical Writers Association, AMWA) [7] և ավելի քան 30 տարեկան Եվրոպական բժշկագիրների ասոցիացիայով (European Medical Writers Association, EMWA) [8]: Ի դեպ, «բժիշկ-թարգմանիչ» փոխարեն կառաջարկելիք օգտագործել հենց «բժշկագիր» (medical writer) մեր կողմից ստեղծված տերմինը, որն ավելի լիարժեք պատկերացում է տալիս այդ մասնագիտության մասին: Ինչպես ժամանակին գրել է Մարսել Պրուստն իր «Կորսված ժամանակի փնտրտուքներում» վիպաշարում «Գրողի պարտականությունն ու անելիքը նույնն են, ինչ թարգմանչինը»:

ՀԲԳԱ-ն տարբեր լեզուների տիրապետող պրոֆեսիոնալ բժիշկ-մասնագետների խումբ է, որոնք հավաքվել են մեկ հարկի տակ բժիշկների, բուժհաստատությունների, դեղագործական ու կենսատեխնոլոգիական ընկերությունների և առողջապահական այլ կառույցներին տարբեր կանոնակարգային փաստաթղթերի, գիտա-



**2022 թվականին հիմնադրվեց Հայ բժշկագիրների ասոցիացիան (ՀԲԳԱ, անգլերեն՝ Armenian Medical Writers Association, ArMWA)**

կան, հետապոտական ծրագրերի, դրամա-շնորհների մշակման, թարգմանության ու ներկայացման գործում աջակցություն տրամադրելու համար: Բժշկագիրները նաև պաղվում են սեղմագրերի (թեպիսներ), գիտական հոդվածների, գրականության ակնարկների, թեկնածուական ու դոկտորական թեզերի, կլինիկական ուղեցույցների, դասակարգումների, գործելակարգերի, ընթացակարգերի, սանդղակների և հարցաթերթիկների մշակմամբ, թարգմանությամբ և հարմարեցմամբ, ինչպես նաև բժշկագիտական, դեղագիտական և այլ առողջապահական գիտակարգերին վերաբերող գրքերի ու մեթոդական ձեռնարկների նախապատրաստմամբ, թարգմանությամբ և խմբագրմամբ: Իր շատ կարճ գոյության ընթացքում ՀԲԳԱ-ն արդեն հասցրել է թարգմանել ԿՈՎԻԴ-19-ի գործելակարգերը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի «Ռազմադաշտային վիրաբուժություն» տեղեկագրքի երկու հաստատվող հատորները [9, 10] և այլն: Եվ անշուշտ, այդ ընթացքում ՀԲԳԱ-ն նույնպես բավմիջս բախվել է մի շարք անգլերեն, հատկապես նորահայտ տերմինների ճիշտ հայերեն թարգմանությունը գտնելու կամ ստեղծելու խնդրին՝ երբեմն ստիպված լինելով եպրույթի հայերեն մեկնակերպը գտնելու կամ ստեղծելու համար խորհրդակցել ոչ միայն ոլորտի առաջատար նեղ մասնագետների, այլև լեզվաբանների հետ, կամ հայերեն տերմինի կից փակագծերում տալ նաև հայատառ անգլերեն կամ լատիներեն բնագիր տարբերակը, որպեսզի նաև այդ կերպ նպաստենք հայերեն տերմինաբանության պահպանմանը, հարստացմանն ու տարածմանը:

Իհարկե, վերոնշյալ խնդիրները շատ ավելի հեշտ կլուծվեին, եթե ունենայինք որակյալ ու վստահելի տերմինաբանական շտեմարաններ (հատկապես առցանց հասանելի), որոնց մասին իրենց հոդվածում նշում են նաև պրոֆ. Հովհաննիսյանը և համահեղ.: Հարցի լուծում կարող է հանդիսանալ նաև Լեզվի տեսչության և հայոց լեզվի պարզացման հետ կապված այլ մարմինների հետ համատեղ կոմիտեների ստեղծումը բժիշկ-մասնագետների մասնակցությամբ: Դրա աշխատանքի հիմնական շոշափելի արդյունքը պետք է լինի տերմինների պաշտոնական շտեմարանը, որը կարող է հետագայում թարմացվել: Տերմինների հստակեցումն ու ստանդարտացումը կհեշտացնի թե՛ բժիշկների, թե՛ թարգմանիչների աշխատանքը: Սակայն, պարզ է, որ դա այդքան էլ հեշտ

գործ չէ: Այդ առումով ձեռքբերում կարելի է համարել Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիայի հիմնադիր նախագահ, Բժշկական սեղմագրերի հայկական հանդեսի գլխավոր խմբագիր երջանակահիշատակ Ռուբեն Հովհաննեսյանի բավմամյա աշխատանքների ամփոփումն ու «Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարանի» լույսընծայումը 2023 թվականին: Այն պարունակում է ապացուցողական բժշկության 163 եպրույթ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Սակայն մեր հպանցիկ վերլուծությունը ցույց տվեց, որ այս բառարանն էլ չուրկ չէ թերություններից:

Ինչպես նշում են պրոֆ. Հովհաննիսյանը և համահեղ., և մենք լիովին համաձայն ենք նրանց հետ, որ ամենատրամադրական հարցը թերևս Հիվանդությունների միջազգային դասակարգչի (ՀՄԴ-10) հայերեն տարբերակի, մեղմ ասած, անլիակատարությունն է: Շտեմարան, որին այսօր, Արմեդ առցանց համակարգի ներդրումից հետո, ամեն բժիշկ ու բուժքույր առնչվում է բառացիորեն ամեն օր: Եթե կարճ, ապա այն շատ լուրջ, եթե ոչ արմատական վերանայման կարիք ունի: Կան հայերեն «տերմիններ», որոնք որևէ աղերս չունեն անգլերեն բնագրի հետ: Այնպես որ ՀԲԳԱ-ի նախաձեռնող խումբն ուրախ կլինի, եթե մի քանի կամավոր պրոֆեսիոնալ թարգմանիչներ ցանկություն հայտնեն միանալ և միասին թարմացնել-շտկել ՀՄԴ-10-ի հայերեն թարգմանությունը և ՀՀ Առողջապահության նախարարությանն առաջարկել փոխարինել այն մեր վերանայած-թարմացրած տարբերակով: Հաջորդիվ կարելի է մտածել նաև Հովհաննիսյանի և համահեղ. մեջբերած DSM դասակարգումը հայերեն թարգմանելու մասին:

Կարծում ենք, որ հայ բժշկական թարգմանչության դպրոցի պարզացմանը միանշանակ կօգնեն նաև ՀԲԳԱ-ի, տարբեր նեղ մասնագիտական բժշկական ասոցիացիաների և պրոֆեսիոնալ թարգմանիչների համատեղ դասընթացներն ու աշխատաժողովները բժիշկների և թարգմանիչների համար՝ ինչպես լեզվագիտական-բժշկական, այնպես էլ համակարգչային-համացանցային գիտելիքների ու հմտությունների պարզացման համատեքստում:

Այդ առումով հնարավոր նախատիպ հանդիսացող հետաքրքիր փորձ էր թարգմանչական շաբաթ 2022 և 2023 նախագծերի շրջանակում ինչպես նաև այլ հարթակներում բժշկական

թարգմանություններին նվիրված նեղ քննարկումների կազմակերպումը և փորձի փոխանակումը բժիշկ-թարգմանիչների և լեզվաբան-թարգմանիչների միջև [11]: Դրանց իրակա-նացումն ինքնին վկայում է դաշտի ակտիվացման, ինչպես նաև հստակ պահանջարկի ձևավորման մասին:

Այսպիսով, վաղուց ժամանակն է ձևավորելու պրոֆեսիոնալ լեզվաբան-թարգմանիչների և փորձառու բժշկագիրների փոխշահավետ տանդեմ, որը կկարողանա արագ և արդյունավետ կերպով լուծել վերոնշյալ մի շարք գիտակարգերում ծառայած բավարարվ խնդիրներ:

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Հովհաննիսյան Գ., Վահանյան Ա., Տաթևյան Հ. Առողջապահական ոլորտի թարգմանության և թարգմանիչների պատրաստման առանձնահատկությունները: ԱԲՀՀ. 2023;3(II):
2. pubmed.ncbi.nlm.nih.gov Accessed: 25 December 2023
3. uptodate.com Accessed: 25 December 2023
4. scholar.google.com Accessed: 25 December 2023
5. am.wikimedia.org/wiki/Նախագծեր/Բժշկական1000 կարևորագույն\_հոդվածներ Accessed: 25 December 2023

6. bible.armeniancathedral.org/w/w41042.htm Accessed: 25 December 2023
7. amwa.org Accessed: 25 December 2023
8. emwa.org Accessed: 25 December 2023
9. irg.am/arm/battlefield-surgery Accessed: 25 December 2023
10. investmagazine.am/2022/11/10/5352 Accessed: 25 December 2023
11. facebook.com/photo/?fbid=371040228637572&use\_t=a.196545972753666 Accessed: 28 December 2023